ՄԱՆԿԱՎԱՐԺ

№ 12 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1901

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՂԲԻՒՐ № 12.

Մանուկ Յիսուս եւ Տիրամայր (պատ.)։ Փոխի բաղձանքը. Տիկ. Զուշանիկ Կուրղինեան։ Հրաւէրք. (անգլիերէնից)։ Կաչաղակն ու արէսը. Ի. Մարկոսեան։ Մայրի՛կ ասա ի՛նձ... Արտաշէս Վարիբեանց։ Փաղիկների մէջ (Էմիլ Տիբօ՛ի). Կ. Կ. Մելիք-Զահնազարեանց։ Դի գեղի ափի ջրաղացպանը. (Մէկէ՛ից) Տիկին Բիւրեղ։ Որտեղ սէր, այնտեղ Աստուած (Տալստոյից) Օր. Մ. Զահուկեանց։ Տօնածառ. (պատկեր)։ Խորհրդաւոր գանձ. (ռուսերէնից) Արմենակ Յովհաննէսեան։ Ծուղօ՛լճ վիրխով (պատկերով). Ջ. Տ.-Գ.։ Այծեր (պատկեր)։

Ջ ւ ա r ճ ա լ ի f

Փանտի։

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴՐԱՍԵՆԵԱԿԻՑ

Ներկայ №-ի հետ ուղարկուում է Աղբիւր-Տարազին 1902 թ. բաժանորդ գրուել ցանկացողների համար պատրաստ պօստի վոխանակագիրք-բանկ։ Խնդրում ենք սրա վրայ բացի բաժանորդի հասցէն՝ ուրիշ ոչինչ չգրել։

Ներկայ №-ի հետ ուղարկուում է Աղբիւրի «Դեկտեմբեր» յատկացած-պատկերը։

ԱՂԲԻՒՐ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

յատկացած դաստիարակների համար

XIX ՏԱՐԻ ՊԵՏՏԵՄԲԵՐ 1901 Թ.

ԹԻՓԼԻՍ
Տպարան Կ. Մարտիրոսեանցի. || Тип. К. Мартиросіанца.
Орбеліановская ул., д. № 1|2.
1901

Дозволено цензурою. Тифлисъ, 3 го декабря 1901

SWEEP YOUR STEPS, SIR!

Մանուկ Յիսուս եւ Յիրամայր

ՓՈՔՐԻ ԲԱՂՁԱՆՔԸ

Նոր-տարիին

Միրուն նոր տարի,
Ա՛յ բարով եկար,
Տեսնեմ ի՞նչ բերիր
Ամենիս համար:

Օրե՛ր երջանիկ,
Նոր միտք ու շնորհք,
Մրգե՛ր քաղցրիկ
Ու շատ խաղալիք:

Բարի նոր տարի,
Անուս չքրոջիս
Անուն աղքատիկ
Եւ խեղճ դժբախտիկ...

Տիկ. Թուշանիկ Կարդիճեան

ՀՐԱՇԻՔՐՔ

(Անգլիերէնից)

Տաք սենեակում զարճանալու, բարեկամներ ամեն կողմից հաւաքւում են ուրախ ուրախ, ալ ու ձախ դռներից։

Ո՛րքան քաղցր է նրանց թէյը, բաղարջը նուրբ և նոր թխած, հիւրերը ոմանք սպիտակ, ոմանք կապտագոյն հագնւած։

Միայն մի փոքրիկ աղջիկ, նոյնպէս այդտեղ

հրաւիրեաց, ոչինչ չէր տեսնում իր շուրջը, նա միայն տրտում էր կանգնած։

Նա ամաչկոտ ու երկիւղած՝ բոլորից հեռու էր նստած, մտածում էր ինքն իրան «ա՛խ, թէ ինձ էլ տային կուշտ հաց»։

ԿԱԶԱՂԱԿՆ ՈՒ ԱՂԻԷՍԸ

—

Աղէսն ու կաչաղակը թէ ինչպէս Յանուարեան — այդ ես չըգիտեմ, միայն այս գիտեմ որ նրանք մօտիկ բարեկամներ էին. միասին ապրում էին, միասին մատն գալիս, խօսում, խորհում և ինչ որ գտնում էին՝ միասին էին ուտում: Մէկը նրանցից հիւանդանալիս, միւսը նրան օգնում էր, երեկոները միասին նստում էին, դարդ-դարդի տալիս, աչխարհի չարից, բարիից խօ-

սում, երգում, ծիծաղում ու քաղցր զրոյց անում։ Այս էլ կար, որ կաչաղակը հալալութեամբ չատ էր աշխատում քան թէ աղւէսը խարդախութեամբ և միշտ կաչաղակի երախտիքն էր աղւէսի վրայ. մանաւանդ որ աղւէսի մի աչքը կոյր էր. նա այժմ մտել էր ուրիշի բոյնը և խփել նրան, աչքի մէկը հանել էին, հաւ էլ բոյնից փախցրել։ Զընայելով այդ բոլորին և չընայելով նրան որ խեղճ կաչաղակը ամեն օր իւղալի պատառ էր բերում աղւէսի համար, նըրան պահում, պահպանում էր, էլի աղւէսի միտքը ծուռ էր. նա ուզում էր ոչ թէ միայն կաչաղակի բերած կերակուրն ուտել, այլ հէնց իրան կաչաղակին և եթէ այդ չէր յաջողւում՝ դա նըրա համար էր, որ կաչաղակը միշտ աչքի մէկը բաց էր քնում։ Մի օր կաչաղակը տկար էր, աղւէսի համար ոչինչ չէր կարողացել բերել և հէնց այդ էր պատճառը, որ աղւէսի վորը վեց-վեց էր անում։ Երեկոյեան երբ կաչաղակը պատրաստւում էր քնել, աղւէսը սկսեց խորամանկութիւն գործ դնել։

—Ա՛յ կաչաղակ եղբայր, ես ճիշտն ասած՝ քեզանից չատ եմ նեղացել։

—Ինչո՞ւ։

—Այ թէ ինչու. ա՞խր մենք տասն տարի

է քարեկամ ենք, մանուհանց ցաւակից, կարեկցող ընկեր ենք. դու դիտես, որ ես քո լաւն եմ ուզում, մեկը որ քեզ մի վատ բան է անում, ուզում եմ նրան սպանեմ, ես իմ անձը կը զոհեմ քեզ համար, մենք որ միմեանց չը հաւատանք՝ քար քարի վրայ չի կանգնիլ։ Մի՞թէ ես կարող եմ քո լաւութիւնը մոռանալ, մի՞թէ ես կարող եմ քեզ վնասել. դու ինձ համար իմ հօրից լաւ ես. թող ես երկու աչքով կուրանում, եթէ ես քեզ անհաւատարիմ լինիմ։ Գիտեմ, դու մտածում ես որ ես «գող աղէսն» ազգականն եմ — այդ ճշմարիտ է, բայց մի ծառ երեք տեսակ պտուղ ունի, ես ո՛րտեղ, գող աղէսը որտեղ. ես մարդկանց հետ եմ մանելով իմ ընկերը եղջերուն է, նապաստակն է, իսկ իմ ազգականն «գող աղէսը» վատ մարդկանց հետ է ապրել. նա սովոր է ուսի մէկը բալձրացրած՝ սրա նրա տունը թանգել, ամբողջ աշխարհը իրարանցով տալ։ Հէնց դրա համար է, որ նրա հարազատ եղբայրը թակել, վռնդրել է անտառից, բայց այդ բոլորը ինձ խօ չէ վերաբերում, ես որտեղ, իմ հայրն որտեղ և գող աղէսը որտեղ։ Մենք ազգութեամբ մօտիկ ենք, իսկ բնութեամբ հեռու. հէնց ինքս էլ զզուում եմ գող աղէսից, բայց ինչ անեմ, ազգական լինելու համար

թևիս տակը նրան պահում եմ։ Ախր ես վիրաւորւում եմ, որ դու ինձ չես հաւատում ու քընելիս աչքիդ մէկը բաց ես պահում. մինչև երբ պիտի դու երկիւղ կրես ինձանից, միշտ երկմիտ, միշտ կասկածոտ, միշտ անհանգիստ. մի՛թէ դա մեր բարեկամութեան սպող բան է։ Երդւում եմ երկինք ու երկրով, որ ես քո ամենահաւատարիմ ընկերն եմ. երկու աչքդ էլ ծածկիր ու հանգիստ քնիր։ Այդ դեռ մի կողմը մնայ, արտաքսաշխարհը գիտէ, որ իմ խորդախութեան համար աչքիս մէկը կորցրել եմ, այդ դու էլ գիտես. հիմա դու որ դիշերը աչքիդ մէկը ծածկում ես, ես կարծում եմ թէ դու իմ ձևն ես անում, ինձ ծաղրում ես և վրաս ծիծաղում. այդ ինձ համար չատ վիրաւորական է։

Այնքան խօսեց աղէսը, այնպէս ծռմռեց քիթ ու պռունկը, որ խեղճ կաչաղակին հաւատացրեց. կաչաղակը մտածեց թէ իրաւ աղէսը նրան չի վնասիլ, հէնց դիտուք հաշւի տեսակէտից չէ՞ որ նա ամեն օր կերակուր է բերում աղէսի համար։ Այդպէս խորհեց մեր կաչաղակը և թէթև կերպով երկու աչքն էլ ծածկեց, որ քնի։ Աղէսն էլ հէնց այդ էր ուզում, վրայ թռաւ, յափշտակեց իր ընկերին և ուզեց մաքրազարդել։ Կաչաղակը ոտից մինչև գլուխ կը-

բակ դառաւ. նա ճնաց զարմացած: Ա՛յ անիրաւ աղւէս, ասում էր նա մտքումը. ա՛յդ է քո չողոքորթութեան նպատակը, ա՛յդ էր քո ստութիւնը, դո՛ւ ստոր արարած, դու չէի՞ր որ իմ հացով ապրում էիր, դու չէիր որ նոր հարսի նման իմ առաջ կոտրատւում էիր, դու չէի՞ր որ երդւում էիր երկնքով, որ ինձ չես խաբել և վերջապէս դու չէիր որ «գող աղւէսին» ծաղրելով քեզ գովում էիր, թէ դու լաւ արհւնից ես: Գող ու խաբեբայ կենդանի, դրանո՞վ ես վարձատրում բոլոր այն լաւութիւնները, որ ես քեզ արի, քեզ ցրտից, սովից ազատեցի. եթէ ես առաջ էի իմացել որ դու այնքան խաբեբայ, ստոր արարած ես, վաղուց իմ երկաթանման կտուցով էն միւս աչքն էլ կը հանէի, որ սովածութիւնից չանսատակ լինէիր. բայց ինչ արած, դու քո վարպետութեամբ ինձ էլ, արարած աշխարհին էլ խաբեցիր:

Այդպէս էր մտածում կաչաղակը. նրա բարկութիւնն աւելի սաստկացաւ, երբ այդ տխուր ճգնաժամին «գող աղւէսը» դունչը ծռմռելով մօտեցաւ իր խարդախ ազգականին, աչքով արեց, քմծիծաղ տւեց և աղերսալի աչքերով կամեցաւ հասկացնել չարագործ աղւէսին, որ իրան էլ կաչաղակի թևից կամ ոտից մի կտոր տայ,

որ ինքն էլ անուշ անի, որովհետև փորը չորս օր էր կերակուրի երես չէր տեսել։—Կաչաղակը տեսաւ, որ ինքը վատ տեղ է մխնացրել, բարկանալով ոչինչ չի լինիլ, նա ուշքի եկաւ և սկսեց քաղաքականութիւն բանացնել։

—Ա՛յ աղէս ընկեր. ասաց նա. սպասիր քեզ մի բան ասեմ՝ յետոյ ինձ կեր։

—Լաւ, պատասխանեց աղուէսը, միայն կարճ կտրիր, որովհետև չաս եմ սոված։

—Շատ ուրախ եմ. ասաց կաչաղակը դողդոջուն ձայնով, որ ես ուրիշի ձեռքը չընկայ, լաւ է որ ես քո բաժինը դատայ, լաւ վախկել եմ, կե՛ր, քեզ հալալ լինի։ Ի հարկէ, չատ վատ կլինէր, որ մենք տասը տարի միասին ապրելուց յետոյ ինձ որսորդները սպանէին կամ չար գաղանները ուտէին, լաւ է որ դու ուտես ինձ. դու էլ խելք ունես, այդ հասկանում ես. ուրեմն պիտի գոհանաս Աստուածանից, որ քո ընկերին քո ձեռքը յանձնեց։

—Ուրեմն ասելդ ի՞նչ է, ուզում ես, որ առաջ վատը տամ Աստծուն և յետո՞յ քեզ անուշ անեմ։

—Այո՛, այդ իմ սրտի փափաքն է, այդ իմ վերջի խնդիրքն է։

—Այդ դժուար բան չէ. այդ ես կը կատարեմ յանուն բարեկամութեան:

Հէնց որ ապերախտ աղուէսը թաթերը մեկնեց որ գոհանայ, կաչաղակը թռաւ ծառի վրայ ու իր աւազակ ընկերի չար ճանկերից պըրծաւ:

Աղուէսը տեսաւ որ արժանի պատիժը ստացաւ, որպէս կորցրեց, ատամները սրած ու փորը սոված ծնաց, բարկացած ասաց ինքն իրան՝ ախր բռնել ես, փափուկ պատառ է, կուլ տո՛ւր, դնա, էլ փառք տալս որն է, ախր գողութիւնը որտեղ, գոհութիւնը որտեղ,— և նա փորի ու խելքի ձեռքից դանդատելով, դուրս ցց.

—Սպասիր, կաչաղակ ընկեր, դէ որ մեր բարեկամութիւնը և իմ պատիւը այդ անիրաւ փորիս համար կորաւ, ես ծնացի աչխարհի և քո առաջ սևերես, լսիր մի խօսք ասեմ ու յետոյ դնա, ուր որ ուզես: Ես գիտեմ դու իմ մօտ այլ ևս չես ծնալ, արդէն քեզ իմ իսկական դոյնը ցոյց տւի և թէ անունը դուրս եկած «գող աղուէսի» քոռ ախպէրն եմ:

—Աւա՛, միայն կարճ կտրիր, որովհետև ես ափսոսում եմ այն րոպէն էլ, որ քեզ նման լիրբ մարդու հետ պիտի անցնեմ:

—Ուր դնաս, ուր թռչես, ամենքին էլ պատ-

Մի՛ր այդ իմ անպիտան արարքը և ասա՛, որ անիծուած լինի այն մարդը, որ առաջ չի ուտիլ ու յետոյ փառք տալ Աստծուն։

—Դու վերջացրիր, անամօթ արարած, դէհ հիմա լսիր թէ ես ինչ կասեմ քեզ։ Աւելի անիծուած լինի այն մարդը, որ քեզ նման աւազակ ընկերի կեղծ խօսքերին հաւատալով՝ երկու աչքն էլ փակած կը քնի։

Ի. Մարկոսեան

ՄԱՅՐԻԿ, ԱՍԱ ԻՆՁ...

—

Պայլիկ, ասա, ինձ՝ մեր խեղճ վաթանը
Ի՞նչի է էսպէս աւեր ու քար-քանդ,
Ի՞նչի լեռները մըռայլ են հագած,
Ձորերն ու դաշտերը արիւնով ներկւած,
Ի՞նչի գետակը անո՛ւշ կարկաչով
Առաջ չի թըռչում մանկական խաղով...

Մա՛յր, էն աշխարհում վարդեր կան սիրուն,
Սոխակն է երգում այնտեղ օրն ի բուն...
Իսկ մեր վաթանը սև սուգ է մըտել.
Անվերջ ողբում է... ինչ է պատահել...

«Ո՛հ, քընէ, բալա՛ս, քընէ անուշիկ,
Պկանջիդ կասեմ օրօրով մեղմիկ—

Մեր սուրբ երկիրը էսպէս չէր առաջ.
Շէն էր, բազմամարդ, պալատներ սիրուն,
Այստեղ չէր լըսում կըսկիծ ու հառաչ
Թըշուառ մայրերի որբ զաւակներուն.
Բայց այդ, սիրելիս, երկար չըտեւեց...
Երբ այստեղ մտաւ ահեղ Թշնամին,
Էն օրից էսպէս ամեն ինչ փոխուեց...
Ֆո եղբայրներիդ, սիրուն քոյրերիդ
Յաւից գետերը լուռ ու մունջ զարձան.
Նոցա մայրերի սուր հեծեծանքից
Շորեր ու դաշտեր թրջերից չորցան...
Երբ անհաւասար, սոսկալի ժամին
Ֆո եղբայրները յոդնած ուժասպառ,
Անկուշտ վըրէժի գայրոյթ սրտերին
Ահեղ ճակատում ընկան քաջաբար,
Էն օրից նոցա արդար գայրոյթի
Սոսկալի ձայնէն, հըսկայ լեռները,
Խորունկ կըսկիծը ցաւի երդ շինած,
Ողբ են մըրմընջում մուխ-մառալ հազած...
Եւ հերոսների անմեղ արիւնով
Գետերը ներկւան... Սոխակն էլ լալով
Փախաւ մեր երկրէն ուրախ աշխարհներ,
Եւ ճենճերահոտ ահեղ հրդեհից
Մեր սուրբ վաթանը դարձաւ լուռ-աւեր...»
«Ո՜հ, քընէ, բալայ,
Էլ մի սէ՜ սրրտիս խորունկ ցաւերը
Խառնէ իրար տայ...
Թող, համբր վըշտի կայծերը ծածկւեն
Մոխրի շերտերով,
Թող, նոքա միայն իմ սիրտը կըրծեն
Սուր ճիրաններով»...

Երուսէս Դարիքեանց

ԷՄԻԼ ՏԷՒՕ

ԾԱՂԻԿԱՆԱՑԻ ՄԷՋ

Փերուկ այգեպանի պատմութիւնները

XVIII

ԱՆԱԿՆԿԱԼ ՅՈՐՁԱԿՈՒՄՆ

Եղմ ու քաղցրաշունչ երեկոն վրայ հասաւ. բարձր սարերի ետեւում մայր մտնող արեւը ձգում էր իր ծիրանագոյն վերջին ճառագայթները դետակի երեսին ու ծառերի կատարներին: Այգում նոր ջրած ծաղիկների խոնաւ անուշահոտութիւնը թանձրացած պատել էր շուրջը. խիտ տերեւների շուքը հետզհետէ աննկատելի կերպով փռւում էր ճանապարհների վրայ:

Յովակիմը Աննիկի հետ շրջում էր ածուները, իսկ Հայկանուշը լուռ նստած՝ դիտում էր բանւորներին:

Կամաց-կամաց նրա ուշադրութիւնը գրաւեց դեղին նաստուրցիան (ջրկոտեմը), որ մեծացել հասել էր բազկաթոռի բարձրութեան:

Բոլոր բոյսերը խաղաղ կանգնած էին, կասես այդ հանդարտ երեկոյեան ժամին քնով էին անցել, միայն ջրկոտեմն էր, որ նկատելի կերպով շարժւում էր և իր ընկերուհիների մէջ միակ կենդանին թւում:

«Զարմանալի բան է, ինչ է պատահել այս ջրկոտեմին», մտածեց Հայկանուշը և ձեռքը տարաւ դէպի նրա ծաղիկը, բայց հէնց դիպաւ թէ չէ, ծաղկի միջից դուրս թռաւ ամբողջովին ծաղկափոշիով թաթախուած և չարացած ու տղտալով ընկաւ օրէորդի վրայ:

Նրա յարձակումն այնպէս արագ եղաւ, որ Հայկանուշը ժամանակ չունեցաւ իր մինչև արմունկը բաց ձեռը ծածկելու, ուստի մեղուն խրեց նրա մէջ իր խայթոցը:

Ցաւից ու վախից Հայկանուշը այնպէս ծկլթաց, որ Յովակիմը վախից ձեռքի ցնցուղը վայր ձգեց:

Աննիկը մի ակնթարթում քրոջ մօտ վազեց, նրա ետևից վազեց Յովակիմն: Երբ խմացաւ բանն ինչումն է, խնամքով նայեց վէրքը և տեսաւ նրա մէջ ցցւած խայթը, որի շուրջը արդէն սկսել էր կարմիր խոլ դառնալ:

— Օրիորդ, շուտով վազիր մի բաժակ քացախախառն ջուր բեր և մայրիկիդ կանչիր. նա ինձանից հեշտ կըհանէ խայթը, ասաց ծերուկը, խայթւած տեղին ցուրտ հող դնելով:

Տիկին Նունէն, Բարսեղը և Արամեանցը շտապեցին Հայկանուշի մօտ:

Մինչ ուրուցը քացախաջրով լւանում էին, Հայկանուշի ցաւը թէև մեղմացել էր, բայց նա պարձակ լացում էր ու գանգատւում: Հիւանդը այնպէս թոյլ էր, որ ամենափոքր վախից անգամ միշտ նեղասրտւում էր:

«Ձար մեղո՛ւ, ինչու համար ինձ խայթեց, ես նրան ոչինչ չէի անելու»... լացում էր նա:

— Ո՛չ, օրիորդ, մեղուն այնպէս էլ չար չէ: Նա կարծել

է թէ դու նրան ուզում ես վշտացնել, դրա համար էլ պաշտպանւել է, պատասխանեց Բարսեղը։

«Դրա համար Հէնց խեղճը կեանքից զրկւեց», քթի տակից ասաց Յովակիմը, խոտերից բարձրացնելով նրա դիակը։

—Ինչ բանից է մեղուն մեռել, չէ որ Հայկանուշը նրան չէ սպանել, ասաց Աննիկը, նրա թաւամազ մարմինը քննելով։

«Նա նրանից է մեռել, որ խայթը թողել է վէրքի մէջ։ Սովորաբար մեղւի խայթոցը, որ որովայնի խոլշումն է լինում, միմիայն այն ժամանակն է բաց թողնում երբ որ և է վտանգ է սպառնում, պատասխանեց Յովակիմը։

—Խե՛ղճ, ինչու համար չէր ժամանակին խայթը հանում, ասաց Հայկանուշը։

«Մեղուն երբէք չէ կարող իր խայթը հանել, որովհետև ամուր է և սղոցի պէս մի կողմից ատամնաւոր։ Երբ նա կոխում է օտար մարմնի մէջ, այդ ատամները ցից ցից են դառնում և արդելք լինում յետ դարձ դալու, այնպէս որ մեղուն ստիպւած է նրան կտրելու, որ ազատւի։ Խայթից զրկւելով, մեղուն ինքը ևս մեռնում է. միմիայն մեղւի մարմնի մէջ է, որ խայթը չէ կոտրւում և մի մեղու միւսին խայթելով չէ մեռնում, ասաց Աբրամեանը։

—Ես քանի քանի անգամ եմ ասեղով կամ փշով ծակծկւել, բայց երբէք այսօրւայ պէս ցաւ չեմ զգացել, լացով ասաց Հայկանուշը։

«Ես այդ հասկանալի է։ Մեղւի խայթի տակը մի բշտիկ կայ թոյնով լիքը, որ խայթելուց վէրքի մէջ է թափւում և ուռցնում, պատասխանեց Յովակիմը։

—Ինչպէս մեղուի խայթը եղինճի մազի նման է, ընդհատեց նրան Աննիկը։

«Ահ դու, իմ ամենագէտ,—ժպտաց մայրը։ Յովակիմ, Աննիկիս դուք շատ բան էք սովորացրել, շատ ցաւում եմ, որ Հայկանուշիս առողջութիւնը չէ ներում որ նրան էլ սովորեցնէք։ Խնդրում եմ, էլի մեղուի մասին մի հետաքրքը-

րական բան պատմեցէք, դուցէ Հայկանուշը խեղճի զորձաձ յանցանքը ներէ։

Ծերունին քաղցրութեամբ նայեց Հիւանդին և տեսց մեռած որդը նրա ձեռքը։

—Տեսէք, օրիորդ, ինչ զեղեցիկ կնճիթ ունի բերանին. դրանով նա ծաղիկների խորքից մեղրանիւթը ծծում հանում է,—շատ հաւանական է որ մեր մեղուն էլ չրկոտեմի ծաղկի մէջ նոյն բանով էր զբաղւած։ Ծաղկանիւթը մեղուի ստամոքսում մի քանի թթւատների շնորհիւ, վոխարկւում մեղր է դառնում։

«Տեսնում ես, Հայկանուշ, ինչքան բարի են մեղուները, չէ որ նրանք մեղ համար են մեղր պատրաստում, ընդմիջեց Աննիկը։

—Ո՛հ, ամենևին ոչ.—ծիծաղեց Հօրեղբայրը—նրանք մեղրը միմիայն իրանց համար են պատրաստում և ոչ մեկի։ Մի-թէ կարծում ես որ մեղուն առաւօտից մինչև երեկոյ անխոնջ աշխատում է ծաղիկների սկաւառակից կաթիլ կաթիլ քաղցր մեղրը և ծաղկափոշին ժողովում, որ դու անուշ անես։

«Բայց եթէ նրանք մեղրը միայն իրանց համար են պատրաստում, ապա ո՞րտեղից է ստացւում այն, որ մենք ենք ուտում։

—Ճատ պարզ է, մենք նրանց վնթակների միջից վեր ենք առնում աւելորդը, որ իրենց պէտք չէ։

«Նրանք մեղրը ինչ են անում. մի-թէ ուտում են։

—Թէ իրանք են ուտում և թէ իրանց ձագերին կերակրում։ Եւրոպայում և թէ մեզանում կովկասում մեղուները տնային միջատներ են և մարդ նրանց կրթում է, բնակարան շինում և ամեն կերպ խնամում. դրա փոխարէն նա ստանում է նրանցից միայն մեղրի և մոմի աւելցածը, որ բոլորովին նրանց պէտք չէ։

Բայց ամեն տեղ այդպէս չէ... Օրինակ Ամերիկայում մեղուները իրանց համար ազատ ապրում են սհազին խմբերով։

նրանք ընտրում են փչակ ունեցող ծառեր կամ խոռոչ ունեցող ժայռեր, որտեղ և թագցնում են իրանց մեղրը:

Կարմրամորթ հնդիկները, որ ապրում են այդ երկրներում, մեղր շատ են սիրում և զարմանալի խորամանկութեամբ գտնում են նրանց տեղը:

Երբ անտառում կամ դաշտում ծաղիկների վրայ մեղուներ են նկատում, իրանց մեյն յատուկ զգուշութեամբ, բռնում են և ձգում պատերը մեղրը քսած մի արկղիկի մէջ: Մի քանի րոպէից յետոյ նրանցից մէկը բաց են թողնում, որ ի հարկէ իսկոյն վերադառնում է տուն ու թէ դաշտում և թէ արկղիկում իր հաւաքած մեղր ընդհանուր պահեստի մէջ դարպակէ: Այդ որսորդները իրանց սուր աչքերով այդ թռչող մեղուին հետևում են մինչև որ աչքից կորչում է, այն ժամանակ արկղիկով գնում են այնտեղը, որտեղ մեղուն անհետացել էր և երկրորդն են բաց թողնում, որը նոյնպէս թռչում է տան ուղղութեամբ: Այդպիսով մէկ մէկու յետևից մեղուներին արձակելով և նրանց թռիչքին հետևելով՝ գտնում են ժայռի կամ ծառի փչակում նրանց շինած բունը կամ փեթակը: Այն ժամանակ այդ վայրենիները մեծ կրակ են վառում փեթակի դռան առաջ, այնպէս որ թանձր ծուխը ծածկում է ծառերն ու ժայռերը և փչակի կամ խոռոչի մէջ մտնելով նրա բնակիչների մի մասին խեղդում է, միւս մասին դուրս քշում: Դրանից յետոյ կարմրամորթ վայրենիները բոլոր մեղրը ժողովում են և ամենևին հոգ չեն տանում քանդած փեթակի մասին:

«Ո՜հ, ինչքան վատ բան է այդ. բացագանչեց Հայկանուշը: Իսկ մեզանում ինչպէս են մեղր ստանում: Մենք նոյնպէս մեղուներին ծուխ են տալիս:

— Առաջ այդպէս էին անում: Խեղճերին անգութ կերպով ծխով խեղդում էին, բայց վաղուց է որ այդ միջոցը թողել են: Այժմ թեթև կերպով ծուխ են տալիս և մեղուներին մի փեթակից միւսը քշում և ոչ մի վնաս չըհասցնելով, մեղրը կտրում, խորիսխները հանում:

«Նրանք կենդանիներին էլ են խայթում», հարցրեց Աննիկը։

—Այնպէս։ Եթէ նրանք խմբովին կամ պար կտպած որևէ գազանի վրայ են յարձակւում, խայթում են մինչև սպանելը. միայն արջն է, որ դրանցից չէ վախենում, նրա հաստ մուշտակը պահպանում է նրան խայթերից։

«Անպիտան արջ», մրթմրթաց Աննիկը։

—Կան այնպիսի մեղուներ էլ, որ բոլորովին խայթ չունին, ասաց Յովակիմը։

«Ա՜խ, ինչու ես այդպիսի մեղուի չբպատահեցի, հառաչեց Հայկանուշը։

—Նրանք վեթակից շատ չեն հեռանում, նրանց հեռու տեղ չէք հանդիպիլ, ոչ նիւթ են հաւաքում և ոչ էլ ծաղկափոշի,-դրանք ծույլ-բոռեր են։

«Ասել է այդ փոքրիկ աշխատասէրների մէջ ծուլերն էլ կան,—երևի նրանց ծուլութեան համար պատժում են և առանց մեղրի թողնում, ասաց Աննիկը, յիշելով թէ ինչպէս Պետերբուրգում դլշերօթիկ վարժարանում իրան էլ յաճախ առանց քաղցրեղէնի էին թողնում ծուլութեան համար։

—Դրանց աւելի խիստ են պատժում, պատասխանեց Ջեբունին։ Մի օր, յետոյ ես ձեզ այդ մասին էլ կըպատմեմ։

Այսպէս խօսակցութեան բռնելով, ոչ ոք չընկատեց թէ ինչպէս մուխը կոխեց և ամենքը բացի Յովակիմը՝ գնացին պատշգամբը։

(Կըշարունակուի)

Կ. Կ. ՄԵԼԻՔ-ՉԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

ԴԻ ԳԵՏԻ ԱՓԻ ՋՐԱՂԱՑՊԱՆԸ

—

Դի գետի ափին ապրում էր մի ջրաղացպան։ Առոյգ և ուժեղ, նա առաւօտից մինչև երեկոյ աշխատում ու երգում էր,— արտօյտն էլ նրա պէս ուրախ ու զրնգուն չէր երգում! Ջրաղացպանը երգում էր զանազան երգեր, միայն նրա բոլոր երգերը վերջանում էին մի տեսակ.—«Ես ոչ ոքի չեմ նախանձում, ոչ ոք էլ ինձ չի նախանձում»։

—Սխալւում ես, բարեկամ, շատ ես սխալւում!—ասաց նրան մի անգամ Ծերունի Թագաւորը.—ես յօժարութեամբ կըփոխէի իմ վիճակը քոնի հետ, եթէ միայն քեզ պէս ուրախ լինէի։ Սոյն ինձ,ինչից է, որ դու բարձր և ուրախ ես երգում, այն ինչ՝ ես Թագաւոր, միայն տխրում և հառաչում եմ։

Ջրաղացպանը արագութեամբ վերցրեց գլխարկը և պատասխանեց ծիծաղկոտ դէմքով.

—Ես սիրում եմ իմ կնոջը, սիրում եմ ընկերներիս, սիրում եմ և իմ երեխաներին—նրանք երեք հատ են—և ոչ ոքի պարտ չեմ ոչ մի կոպէկ. շնորհակալ եմ գետից. նա պտտացնում է անիւը և ալիւր է աղում ինձ ու իմ ընտանիքի համար։ Ի՞նչպէս ուրախ չըլինեմ ես։

—Մնաս բարև, եղբայր! ասաց Թագաւորը խորը հառաչանքով.—մնաս բարև! եղիր միշտ բախտաւոր։ Բայց եթէ չես ուզում սուտ խօսել, այլ և չերդես այն բանի մասին, թէ իբրև քեզ ոչ ոք չի նախանձում։ Քո ջրաղացը արժէ ամբողջ իմ Թագաւորութիւնը, իսկ քո ալիւրաթաթախ գլխարկը, հազար անգամ լաւ է իմ Թագից։

Տիկին Բիւրեղ

(Մէկէ՛ից—անգլիական բանաստեղծ։

ՈՐՏԵՂ ՍԷՐ, ԱՅՆՏԵՂ ԱՍՏԻԱԾ

(Տ ա լ ս տ ո յ ի ց)

տեփանիչը դուրս եկաւ, իսկ Մարտինը աճեց վերջին բաժակը, խմեց, հաւաքեց ամանները և կրկին նստեց պատուհանի առաջ կօշիկը կարելու։ Կարում է և նայում պատուհանին,— Քրիստոսին է սպասում, ամբողջ ժամանակ նրա և նրա գործերի մասին մտածում։ Եւ նրա գլխում բոլորը Քրիստոսի պանազան խօսքերն են։ Անցան նրա մօտով երկու զինուոր, մէկը տէրտէրնական, իսկ միւսը սեպհական կօշիկներով, յետոյ անցաւ Հարևանի տան տէրը մաքրած կրկնակօշիկներով, անցաւ Հացարարը զամբիւղը ձեռին։ Բոլորը մօտով անցան, և ահա հաւասարւեց պատուհանի հետ, տեսաւ մէկ կին էլ բրդի գուլբաններով և գիւղական ոտնամաններով։ Անցաւ նա պատուհանի մօտով և կանգ առաւ պատի մօտ։ Նայեց Ագէիչը պատուհանի տակով, տեսնում է — օտար կին, վատ հագնուած, իր մանուկի հետ կանգնած է պատի մօտ եղեսը քամուց դարձրած և փաթաթում է երեխային, բայց փաթաթելու էլ բան չունի։ Կնոջ հագուստը ամառւայ է, այն էլ կեղտոտ։ Ձրջանակի եռևից լսում է Ագէիչը, մանուկը լալիս է, մայրն էլ կամենում է

Sogwdwn

հանգստացնել նրան, բայց ոչ մի կերպ չի կարողանում հանգստացնել: Վեր կացաւ Ադէիչը, դուրս եկաւ դռան առաջ, սանդուղքը և կանչեց.

— Քոյր իմ, քոյր իմ:

Կինը լսեց, և դարձաւ դէպի նա.

— Ինչո՞ւ այդպէս այդ ցրտումը կանգնել ես մանուկի հետ, մտի՛ր այստեղ սենեակը, տաք տեղում նրան աւելի լաւ կրփաթաթես: Ահա այստեղ:

Զարմացաւ կինը: Տեսնում է ծեր մարդուն, գոգնոցը կապած, ակնոցները քթին, կանչում է իր մօտ: Գնաց նրա յետևից:

Նրանք իջան սանդուղքից, մտան սենեակը, մօտեցրաւ ծերուկը կնոջը մահճակալի մօտ:

— Այստեղ նստիր, քոյր իմ, վառարանից մօտիկ, կրտաքանաս և կրկերակրես մանկանը, ասաց նա:

— Առաւօտանից ես ինքս չեմ կերել ոչինչ, կաթ չունիմ կերակրելու, ասաց նա և միևնոյն ժամանակ մօտեցրաւ մանուկը գրկին:

Չարժեց գլուխը Ադէիչը, գնաց սեղանի մօտ, հանեց հաց, փոքրիկ դաւաթ, բաց արաւ վառարանը, աճեց փոքրիկ դաւաթի մէջ կաղամբաթանը, հանեց կերակուր, բայց դեռ պատրաստ չէր, աճեց միայն կաղամբաթանը և դրաւ սեղանի վրայ: Հացը և սրբիչը նոյնպէս դրաւ սեղանի վրայ:

— Նստիր, քոյր իմ, անուշ արա, մանուկի հետ ես կընստեմ, հէնց ես էլ ունէի երեխերք, գիտեմ նրանց դաչեակելը: Խաչակնքեց կինը, նստեց սեղանի մօտ և սկսեց ուտել, իսկ Ադէիչը նստեց մահճակալի վրայ երեխայի մօտ:

Ադէիչը սկսեց շրթունքներով ձայներ արձակել, բայց չէ յաջողւում, ատամ չըկայ: Երեխան լալիս է անդադար: Եւ մտածեց Ադէիչը նրան մատով վախեցնել. մօտեցնում է մատը ուղիղ նրա բերանին և էլի հեռացնում, բերանը չի տալիս, որովհետև մատը սև է, կօշկաներկի մէջ թաթախուած:

Երեխան նայեց մ֊ւտին, հանդարտուեց, յետոյ էլ սկսեց ժպտալ։ Աղէկիչն էլ ուրախացաւ։ Կինն էլ ուտում է ու պատմում, թէ ինքը ով է և որտեղ է եկել։

—Ես գինուորի կին եմ, ասում է նա, ամուսնուս ահա ութ ամիս է ուղարկել են Հեռու, տեղեկութիւն էլ չըկայ։ Ապրում էի խոհարարութեամբ, բայց երբ երեխաս ծնուեց էլ չընդունեցին. ահա երեք ամիս է առանց տեղի շրջում եմ։ Իմ ունեցածովս էի ապրում, ուզում էի ծծմայր լինել, բայց տկար լինելուս պատճառով չեն ընդունում։ Գնացել եմ ահա վաճառականի կնոջ մօտ, որտեղ մեր տատն է ապրում, խոստացան ինձ ընդունել, ես կարծում էի թէ կըմնամ մշտական, բայց նա հրամայեց միւս շաբթից հեռանալ։ Նա ապրում է հեռու, ես էլ ճանապարհին յոգնեցի, այս խեղճին էլ չարչարեցի։ Ձնորհակալ եմ մեր տանտիկնոջից, խղճում է մեզ, ի սէրն Քրիստոսի տալիս է բնակարան, թէ չէ չէի իմանալ թէ ինչպէս ապրեմ։

Հառաչեց Աղէկիչը և ասաց.

—Տաք հագուստ ունիս արդեօք։

—Իմ հարազատ, որտեղից կըլինի տաք հագուստ. երեկ վերջին շորս տասը կոպէկի տեղ դրաւ դրեցի։

Մօտեցաւ կինը մահճակալին, վերցրաւ երեխային, իսկ Աղէկիչը վեր կացաւ, մօտեցաւ պատին, որոնեց, բերաւ մի հին շոր։

—Առ, թէև հին է, բայց կարելի է փաթաթել երեխային, ասաց նա։

Նայեց կինը շորին, նայեց ծերուկին, վերցրաւ շորը և լաց եղաւ։

Յետ դարձաւ Աղէկիչը, մտաւ մահճակալի տակ, մօտ քաշեց արկղիկը, որոնեց այնտեղ ինչ որ և նստեց կրկին։

Եւ ասաց կինը.

—Քրիստոսն վերկէ քեզ, պապիկ, երևի նա ուղարկեց ինձ քո պատուհանի տակ, կըսառեցնէի ես մանկիկին։ Երբ

ես դուրս եկայ, տաք էր, բայց հիմա ինչպէս ցուրտ է: Երևի ինքը Հայրը հրամայեց քեզ նայել պատուհանին և ինձ թշւառիս խղճալ:

Փպտաց Ադէիչը և ասաց.

—Ի հարկէ նա հրամայեց: Պատուհանին ես անտեղի չեմ նայում, քոյր իմ: Եւ Մարտինը պատմեց դինւորուհուն իր երազը, և ինչպէս նա լսեց ձայնը, որ Փրկիչը խոստացաւ գալ էսօր իր մօտ:

—Ամեն ինչ կարող է լինել, ասաց կինը, ու վեր կացաւ, դցեց իր վրայ շորը, վախթախեց նրա ձէջ իր երեխային և սկսեց խոնարհիլ և կրկին շնորհակալութիւն անել Ադէիչին:

—Ընդունէր ի սէր Քրիստոսի շոր առնելու համար, ասաց Ադէիչը և տւաւ նրան տասը կոպէկանոց:

Խաչակնքեց կինը, խաչակնքեց և Ադէիչը և ճանապարհեց կնոջը:

Գնաց կինը, կերաւ Ադէիչը կաղամբաթխանր, հաւաքեց ամեն ինչ և կրկին նստեց դորձին: Բանում է և պատուհանն էլ չի մոռանում: Չէնց որ մթնում է պատուհանը, իսկոյն նայում է թէ ուր անցաւ: Անցան ծանօթներ և օտարներ, բայց առանձին ուշադրութեան արժանի ոչ ոք չրկար:

Եւ ահա տեսնում է Ադէիչը, հէնց իր պատուհանի դէմ կանդնեց մի վաճառուհի կին տանում է մի զամբիւղ, որի մէջ գտնւում էին ծախելու համար խնձորներ: Քիչ էր մնացել խնձորից, երևի բոլորը ծախել էր: Իսկ ուսով գցած նա տանում էր մի քսակ տաշեղ: Երևի հաւաքել է մի որևէ շինութեան մօտից, դէպի տուն է գնում: Այո, երևի քսակը յոգնեցրեց նրա ուսը, ուզեց միւս ուսին փոխադրել:

Վայր դրաւ նա քսակը փայտի վրայ, դրաւ խնձորի զամբիւղը սրնկին և սկսեց քսակի միջի տաշեղը թափ տալ և ուղղել: Եւ մինչև որ նա քսակը ուղղում էր, որտեղից որ էր դուրս ցատկեց մի փոքրիկ տղայ պատռւած դլխարկով, վերց-

բաւ զամբիւղից մի խնձոր և ուզում էր փախչել, բայց պառաւը նկատեց, դարձաւ դէպի երեխան և նրա թևից բռնեց: Երեխան չարչարւում էր և ուժի չափ աշխատում էր ազատւել, բայց պառաւը բռնած էր նրան երկու ձեռքով: Նա վայր դրեց երեխայի գլխարկը, և բռնեց նրա մազերից: Երեխան գոռում է, իսկ պառաւը հայհոյում:

Հազիւ Աղէիչը կարողացաւ բիզը ցցել, շպրտել յատակի վրայ, դուրս ցատկել դէպի դուռը. մինչև անգամ սանդուղքի վրայ ոտը սահեց և ակնոցները վայր ընկան: Դուրս վազեց Աղէիչը փողոց. պառաւը փոքրիկի մազերից էր քաշքշում և հայհոյում, ուզում էր տանել ոստիկանատուն: Փոքրիկը աշխատում էր ազատւել:

—Ես չեմ վերցրել, ինչո՞ւ ես ծեծում, թո՛ղ, ասում է նա:

Աղէիչը սկսեց նրանց բաժանել, բռնեց երեխայի ձեռքից և ասաց.

—Բաց թողէ՛ր սրան, տատիկ, ներէ՛ր սրան ի սէր Քրիստոսի:

—Ես դրան այնպէս կընկերեմ ճիպոտով, որ դա մինչև նոր ճիպոտները բուսնելը չի մոռանալ: Անպէտանին ոստիկանատուն պիտի տանեմ:

Սկսից Աղէիչը խնդրել պառաւին:

—Թող, տատիկ, այսուհետև սա էլ չի անել. թող ի սէր Քրիստոսի, ասում էր նա:

Բաց թողեց նրան պառաւը, ուզեց երեխան փախչել, բայց Աղէիչը պահեց նրան:

—Խնդրէ՛ր տատիկից ներողութիւն, ասում է նա, և այսուհետև էլ չանես, ես տեսայ, որ դու վերցրիր:

Լաց եղաւ երեխան և սկսեց ներողութիւն խնդրել:

—Ահա այսպէս, հիմա առ, ահա քեզ խնձոր:

Եւ Աղէիչը վերցրաւ զամբիւղիցը խնձորը և տւաւ երեխային:

—Կրվճարեմ, տատիկ, ասաց նա պառաւին։

—Այդպիսով այդ անպիտաններին երես կըտաս, ասաց պառաւը։ Նրան այնպիսի պարգև պէտք է տալ, որ նա մի շաբաթ չըկարողանայ շարժուել։

—Էյ, տատիկ, տատիկ, ասաց Ասդէիչը։ Մեր հաշուով այդպէս է, բայց Աստուծոյ—ոչ։ Եթէ սրան խնձորի համար հարկաւոր է ծեծել, ապա մեր մեղքերի համար մեզ հետ ինչ-պէս պէտք է վարուել։

Պառաւը լռեց։

Եւ Ասդէիչը պատմեց պառաւին այն առակը, թէ ինչպէս տէրը ներեց իր պարտատիրոջ քանքարի մեծ պարտքը, իսկ պարտատէրը դնաց և սկսեց խեղդել իր պարտատիրոջ քիչ պարտքի համար։ Լսեց պառաւը, լսում էր և հրեխան։

—Աստուած հրամայեց ներել, ասաց Ասդէիչը, թէ չէ մեզ էլ չի ներուիլ։ Ամենքին ներել, իսկ անհատակացողին աւելի շատ։

Ձարմեց պառաւը դլուխը և հառաչեց։

—Այդ այդպէս է – ասաց պառաւը, բայց դրանց էլ շատ են երես տուել։

—Դէ, մենք ձերերս էլ պէտք է սովորացնենք նը-րանց։

—Ես էլ եմ հէնց այդպէս ասում, ասաց պառաւը—ինձ էլ ունէի եօթը դրանցից, հիմա մի աղջիկ է մնացել։

Եւ պառաւը սկսեց պատմել, թէ որտեղ և ինչպէս է ապրում իր աղջկայ մօտ և քանի թոռն ունի։

—Ահա, ասում է նա, թէ ինչ այժ ունիմ, բայց էլի չարչարուում եմ։ Մանուկ թոռներիս խղճում եմ, թոռներս էլ լաւ են, ոչ ոք ինձ այնպէս չի ընդունիլ, ինչպէս նրանք։ Փոռս ոչ ոքի մօտ չի գնալ բացի ինձանից։ Տատիկ, սիրելի տատիկ, իմ սրտակից... ասում են սրանք։

—Ի հարկէ, երեխայի բան է, Աստուած իր հետ, ասաց նա փոքրիկ տղայի համար։

Չէնց որ պառաւը կամեցաւ բարձրացնել քսակը ուսին, յանկեց երեխան և ասաց.

—Տուր ես տանեմ, տատիկ, իմ ճանապարհի վրայ է։

Պառաւը շարժեց ղլուխը և դրեց քսակը երեխայի ուսին։

Եւ նրանք գնում էին մեասին ճանապարհով։

Պառաւն էլ մոռացաւ Ադէիէից ինձորի վճարը պահանջել։

Ադէիէը կանգնած նայում էր նրանց երկար ժամանակ և լսում, թէ ինչպես նրանք գնում և ինչոր խօսում էին։

Ադէիէը ճանապարհեց նրանց, և վերադարձաւ սենեակը։ Սանդուղքի վրայ նա գտաւ ակնոցները, կոտրած չէին—վերցրաւ բիզը և սկսեց կրկին գործել։

Մի քիչ գործելուց յետոյ, նա նկատեց, որ էլ չի կարողանում կարել, մութ է և տեսաւ որ վառելանիւթը վերջացաւ, լապտերը դժւար էր վառել։

«Երևի հարկաւոր է ճրագը վառել, մտածեց նա, պատրաստեց ճրագը, կախեց և նորից դարձաւ գործին։

Մի կօշիկը բոլորովին վերջացրաւ, շուռ տուաւ, նայեց և տեսաւ որ լաւ է։

Չաւաքեց գործիքները և աւելորդ կտորները, վերցրաւ Աւետարանը դարակից։ Ուզում էր նա բաց անել գրքի այն տեղը, որտեղ երէկ նշան էր դրած։ Բայց Ադէիէը հէնց որ բաց արաւ Աւետարանը, յիշեց երեկւայ երազը։ Եւ հէնց որ մտաբերեց, թւում էր նրան, կարծես թէ մէկը շարժւում է, ոտներով քայլում է իր եաևից։ Շուռ եկաւ Ադէիէը և տեսնում է, կարծես մարդիկ են կանգնած մութ անկիւնում։ Կանգնած են մարդիկ, բայց չի կարողանում գանազանել թէ ովքեր են։

Եւ նրա ականջին շշնջում է մի ձայն։

—Մարտին, այ Մարտին, մի՞թէ դու չըճանաչեցիր ինձ։

—Ո՞ւմ, ասաց Աւէդիէը։

— Ինձ, ասաց ձայնը:

Եւ դուրս եկաւ մութ անկիւնից Ստեփանիչը, ժպտաց և, ինչպէս ամպիկ ցրուեցաւ և էլ չերևաց...

— Իսկ Այդ Ես եմ — ասաց ձայնը:

Եւ երևեցաւ մութ անկիւնից կինը մանուկի հետ, ժպտաց կինը, ծիծաղեց երեխան, և նոյնպէս կորան:

— Իսկ այդ Ես եմ — ասաց ձայնը:

Դուրս եկան պառաւը և երեխան խնձորը ձեռին, երկուսն էլ ժպտացին և նոյնպէս կորան:

Ուդէիչէի Հոգին ուրախացաւ, խաչակնքից նա, դրաւ ակնոցները և սկսեց կարդալ այնտեղից, որտեղից բացւեց:

«Որովհետև սովեցի և դուք տուիք ինձ ուտել, ծարաւեցի և դուք խմեցրիք ինձ. օտար էի և դուք ինձ ձեզ մօտ առաք»:

Եւ երեսի ներքևում կարդաց նա,

«Ճշմարիտ եմ ասում ձեզ, որովհետև ինչ որ իմ փոքր եղբայրներից մէկին արիք, ինձ արիք»: (Մատթէոսի 25 գլուխը-ԻԵ): Ե հասկացաւ Ուդէիչէը որ երազը չի խաբել նրան, որ ճշմարիտ Փրկիչը եկաւ այն օրը իր մօտ և ճիշտ որ ինքը ընդունեց Նրան:

Or. Մարիամ Գահուճեանց

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԳԸՆԴ

—

Վերնատան մի փոքրիկ սենեակում, որ գտնւում էր մեր տան կողքին, ապրում էր մի ծեր գրագիր։ Ընդալելով իր չանքերին, նա շատ քիչ էր կարողանում աշխատել և միշտ գտնւում էր նեղութեան մէջ։ Երկտասարդ ժամանակը նա ընդշանեցաւ մի հարուստ քաղաքացու ազջկայ հետ, որ վախճանւեց մինչև իր ամուսնանալը. նրա մահից յետոյ վէնցէլը (այսպէս էին կոչում նրան) հաղիւ էր կարողանում հալածալ իր ապրուստը։

Առաւօտները նա պարապում էր նօտարի մօտ, իսկ կէս օրից յետոյ մի փոքրիկ ման էր գալիս քաղաքի շրջակայքում և յետոյ գալիս նստում իր փոքրիկ, թանաքի բծերով լի սեղանի մօտ և արտագրում էր զանազան ձեռագրներ և պաշտօնական թղթեր։ Նա լաւ ձեռագիրը ունէր. դիտութիւնից էլ չէր կաղում, որովհետև անցել էր գիմնազիայի մի քանի դասարանները և երբէք նիւթի կողմից պակասութիւն չէր զգում։ Ես դեռ ուսանող էի, երբ ծանօթացայ վէնցէլի հետ։

Նրա խօսալու եղանակը և ձևերը շատ էին դուր գալիս

ինձ: Նրա մտերիմ ձայնը և բարեկամական հայեացքը այնքան սիրեցի, որ միշտ յաճախում էի նրա սենեակը: Շուտով մենք բարեկամացանք իրար հետ և շատ սիրեցինք միմեանց:

Մէկ գարնանային օր ես նստած էի Վենցէլի հետ պատուհանում և նայում էի իմ շուրջը: Պայր մտնող արեգակի ճառագայթները ներս սողալով պատուհանից՝ ընկել էին դիմացի պատի վրայ և լուսաւորել պահարանի երկաթէ դուռը: Այդ պահարանը ես սկզբից չէի նկատել. այժմ միայն տեսայ որ Վենցէլը կախում էր նրա վրայից իր շորերը և այդպիսով ծածկում նրան: Բայց այս անգամ կախարանը կոտրել էր և տեղը բաց էր մնացել:

—Ինչպէս երևում է, դուք այստեղ էք թագցնում ձեր գանձը, ասացի ես ցոյց տալով պահարանը:

Վենցէլը կարմրեց:

—Այո, դուք չէք սխալւում, այստեղ եմ պահում ես իմ գանձը, պատասխանեց նա դողդոջուն ձայնով. ահա սրանումն է իմ միակ հարստութիւնը:

—Ինձ թւում է թէ, հարցրի ես նորից, որ այս երկաթէ դուռը տանուտէրն է շինել:

—Ես ինքս եմ պատւիրել շինելու իմ դառն աշխատանքի կոպէկներով, պատասխանեց Վենցէլը: Ես չեմ թագցնի ձեզանից, մտածում էի պաշտպանել գողերից այդ գանձը: Նա մօտեցաւ պահարանին, բաց արեց և հանեց այնտեղից մի փոքրիկ սևացած արկղ, որ խնամքով փակած էր երեք կողպէքով:

—Տեսնում էք ահա, իմ բարեկամս, ասաց նա յուզուած ձայնով, այս արկղը իմ մխիթարութիւնն է, առանց սրան ես վաղուց կենդանի չէի լինի: Վենցէլը հանեց գրպանից իր մեծ կապոյտ ծաղիկներով թաշկինակը և սրբեց խնամքով արկղի վրայի փոշին:

—Նա մնաց ինձ ժառանգութիւն իմ հօրիցը, շարունակեց

Նա տխուր ձայնով, մահւան րոպէին նա կանչեց ինձ և տալով ինձ այս արկղը ասաց.

«Ձատ բան չեմ թողնում քեզ, բայց դժւար րոպէներում սա դարձեալ մի մխիթարութիւն է քեզ համար: Կրկնում եմ, սա շատ բան չէ, բայց սրա մէջը կայ գուտ ոսկի: Դու չարագործ կըլինէիր, եթէ բանայիր այս արկղը: Միմիայն ծայրայեղ կարիքը պէտք է ստիպէ քեզ բաց անել սրան: Երդւիր ինձ բոլոր սրբերի անուններով, որ դու կրկատարես իմ ուխտը»:

Եւ ես երդւեցի:

Եւ ահա տեսնում էք որ ճիշտ կատարել եմ իմ երդումը:

—Նշանակում է ծայրայեղ կարիքը երբէք ձեզ չի՛ նեղել:

—Չի՛ նեղի՛լ, ասաց նա դառը կերպով ծիծաղելով: Երեք տարի սրանից առաջ, ես անդիտակցաբար վիրաւորեցի իմ ցուցամատը: Ինն շաբաթ չէի կարողանում գործել և իմ փոքրիկ խնայողութիւնը սարսափելի արագութեամբ նւազում էր: Այն միտքը, թէ ինչ պէտք է անեմ ես վաղը, աւելի և նպաստում էր իմ հիւանդութեանը: Վերջապէս ես ջերմ ու տենդ ստացայ և սկսեցի գառանցել: Բայց հիւանդութեանս ամենասաստիկ րոպէներում ես մտաբերում էի արկղը և այդ միտքը ինձ մի փոքր մխիթարում էր: Ես իմանում էի, որ ծայրայեղ դէպքում, կարող եմ օգտւել արկղից:

Բայց ես միշտ հեռացնում էի այդ միտքը ինձանից: Եւ հէնց որ վճռեցի կատարել իմ հօրս պատւէրը, ես սկսեցի առողջանալ, որպէս զի դարձեալ հրաժարւիմ արկղի օգնութիւնից: Ես կարող եմ ձեզ շատ օրինակներ բերել, որտեղ արկղի վրայ դրած յոյսս պահում էր ինձ:

Եւ երդոց Աստւած օրհնի իմ այս դանձը և իմ սիրելի հօրս:

—Բայց դուք երբէք ցանկութիւն չէք ունեցել բանալ արկղը և տեսնել թէ ինչ կայ մէջը:

Վենցէլը բացասական կերպով շարժեց գլուխը:—Ես երդւել եմ իմ հօրը—հանդիսաւոր կերպով արտասանեց նա:

— Բայց շատ կարելի է, որ դուք երբէք էլ չէք իմանալ...

Նա կտրեց իմ խօսքս.— Եթէ մեռնիմ, այո, բայց ահա դուք տեսնում էք, որ չընայած որ ես 70 տարեկան եմ, բայց այնուամենայնիւ առոյգ եմ: Բայց ես մոռացայ ձեզ ասել որ 90 տարեկան հասակում կարող եմ բանալ արկղը, մինչև անգամ եթէ կարիքի մէջ էլ չըգտնուեմ:

— Զարմանալի կարգադրութիւն:

— Այո՛, շատ զարմանալի: Իմ հայրս նրանցից էր, որոնց առ հասարակ կոչում են— ֆիլիսոֆայ: Սրհնստով նա կօշկակար էր, բայց նա այսպէս ասած լուսաւոր գլուխ ունէր, որ շատ էր մտածում և մտածում էր առողջ և շատ խորը:

Վենցէլը լռեց և սկսեց դիտել խաղաղ և թափանցիկ հորիզոնը, որի յետևում թաղչում էր մայր մտնող արեգակը:

— Եթէ ես մեռնեմ մինչև այդ ժամանակը, ասաց նա,— մտածելով, ես արդէն հոգ եմ տարել, որ իմ գանձը վատ մարդկանց ձեռք չընկնի: Դուք դիտէք որ ես ոչ որդի ունիմ, ոչ էլ մի բարեկամ. և դուք, իմ սիրելի, կըժառանգէք իմ ունեցածս:

— Ես զարմացայ և անգիտակցաբար ընկայ նրա վզովը. բայց նա հանդարտութեամբ կանգնեցրեց ինձ և հաստատեց իր կարգադրութիւնը: Յետոյ մենք սկսեցինք խօսել զանազան բաների մասին: Վենցէլը շուտ-վ նստեց իր գործին, իսկ ես ցած իջայ և մտածելով երկար ժամանակ թափառում էի քաղաքի փողոցներով: Մի ամիս անց, Վենցէլը մեռաւ կաթուածից: Սաստիկ տխրելով նրա մահուան վրայ, գնացի ես նրա սենեակը, որպէս զի մի անգամ ևս տեսնեմ իմ հին բարեկամիս: Հանդուգնեալի տեսքը, իր աղքատիկ անկողնում, ինձ վրայ խորը, ցնցող տպաւորութիւն գործեց: Նրա դէմքը պարզ էր: Ինչ որ դառն և անախորժ էր, ինչ որ նա համբերութեամբ տարաւ իր կեանքումը, ոչինչ հետք չէր թողել նրա դէմքի վրայ և նրա շրթունքները հազիւ նկատելի ժպիտ էին

արտայայտում: Ես և հանդուցեալի երկու հասակակից ընկերները, միակն էինք, որ ուղեկցում էինք նրա աղքատիկ դագաղին:

Չամաձայն նրա կտակին ես ժառանգեցի նրա աղքատիկ հարստութիւնը, որոնց թւում էր և սև արկղը: Ես սաստիկ խռոված էի բայց անելով արկղը: Բայց ինչ էք կարծում, ինչ կար մէջը, խոստացած ոսկին...

Ո՛չ, նա բոլորովին դատարկ էր: Նրա խուփի ներքին երեսի վրայ, հազիւ կարողացայ ջոկել հետևեալ գրութիւնը.

«Իմ սիրելի և թանկագին որդի.

Դէպի կեանքի դժւար ճանապարհը դու դուրս ես գալիս առանց որևիցէ կարողութեան: Յուսահատութեամբ ես խոստովանում եմ այդ ճշմարտութիւնը: Ես մոռացեցի թողնել այս արկղում քեզ համար, երևակայական հարստութիւն: Քո երդումը ինձ համար մի երաշխաւորութիւն էր, որ դու ծայրայեղ դէպքում կըբանաս այս արկղը և կիմանաս բոլորը: Իսկ այն ժամանակ միևնոյն է, դու կըլինես մեծ յուսահատութեան մէջ և հիասթափումն քեզ վրայ զօրեղ ազդեցութիւն չի գործի: Բայց քանի որ արկղը փակած է, այն ժամանակ, այն միտքը -որ դու ունես մի օգնութիւն —քեզ կըպահէ կեանքի կռւի մէջ: Եթէ այդ այդպէս կըլինի, այն ժամանակ, ոսկին այդտեղ ոչ մի դեր չի խաղում: Վստահ եմ, որ իմ այս գրութիւնս երբէք քո ձեռքը չի ընկնի:

Քեզ ջերմ սիրող Հայր»:

Ես սաստիկ գդայւեցի: Դիշերը ես մի օտարոտի երազ տեսայ: Ես տեսայ մի տեսիլք, որ թւում էր թէ ես տեսնում եմ իմ հօրս բարեկամի ստւերը, կամ թէ չէ այն մարդու ստւերը, որի կեանքը անցաւ հոգ տանելով միմիայն վշտակիր և տանջւած մարդկութեան վրայ: Եւ թւաց թէ այս ստւերը ինձ ասաց. «Դու, կարծեմ, դիտես իմ

խեղճ որդուս—հիւանդ տանջուող մարդկութեանը: Նայէր, իմ ձեռքումս է այն խորհրդաւոր արկղը, որ ներշնչում է մարդկանց յոյս և հաւատ: Սրա մէջն է գտնւում երկրային բոլոր տանջանքների ճիշտ փրկութիւնը: Ես կըտամ մարդկանց այս արկղը և թող նրանք պահպանեն սրան իրանց աչքի լոյսի պէս»:

Եւ ստերը չքացաւ:

Թարգմ. Սիմեոնակ Յովհաննիսեանց

ՌՈՒԴՕԼՖ ՎԻՐԽՈՎ

(80-ամեակի առիթով)

—

Անցեալ Հոկտեմբերի սկզբին Փերմանիայի մայրաքաղաք Բերլինի մի ծայրի համեստ փողոցներից մէկը շքեղ կերպով լուսավառուած էր: Բոլոր տները պայծառ լուսաւորուած էին, բոլոր պատուհաններում վառւում էին գոյնզգոյն լապտերներ և կանթեղներ:

Այդ փողոցի բնակիչները տօնում էին իրանց հռչակաւոր դրացու, Ռուդոլֆ Վիլխովի, ութսունամեայ յոբելեանը, որ այդ օրը ընդունում էր ամբողջ գիտնական աշխարհի ողջոյնները:

Ամերիկայից, Աւստրալիայից, Ասիայից, Աֆրիկայից, Եւրոպայի բոլոր ծայրերից հաւաքւել էին մօրուիկ՝ ողջունելու այն մեծ ծերունուն, որ իր ամբողջ կեանքում աշխատել է յօգուտ գիտութեան, ուրեմն և մարդկութեան:

Երբ երիտասարդ Վիրխովը, համարեա 60 տարի սրանից առաջ, ուսումը, այն ժամանակուայ բժիշկները աւելի քիչ բան գիտէին բժշկութիւնից՝ քան հիմա գիտեն բժիշկները: Այն ժամանակ բժիշկների մեծամասնութիւնը դեռ այնպէս չըզիտէր քննել հիւանդներին, ինչպէս հիմա: Մարդու մարմնի կազմն էլ վատ էր ուսումնասիրուած: Դրանից յետոյ բժշկական գիտութիւնը, այսինքն այն բոլորը, ինչ որ գիտնական մարդիկ գիտեն մարդու հիւանդութիւնների և բժշկութեան մասին, շատ է առաջ գնացել և հարստացել նոր տեղեկութիւններով:

Ի հարկէ, այդ բոլոր գիտական գիւտերը արւած են մի շարք գիտնականների աշխատութեամբ, սակայն նրանց մէջ ամենաառաջինն տեղերից մէկը բռնում է Ի. Վիրխով: Նա իր ամբողջ կեանքում դիակների վրայ ուսումնասիրել է այն փոփոխութիւնները, որ այս կամ այն հիւանդութիւնն առաջ է բերում մարդու մարմնի մէջ: Բժիշկները աշխարհի բոլոր ծայրերից գալիս էին Բերլին, որ սովորեն հռչակաւոր պրոֆէսորի մօտ:

Բայց Վիրխովը չէր բաւականանում միայն հիւանդութիւնները ուսումնասիրելով: Նա նոյնպէս աշխատում էր, որ բոլոր մարդիկ կարողանան աւելի առողջապահական կանոններով ապրուստ ունենալ, որ նրանք հասկանան, թէ կեղտոտ, զարշահոտ և մռայլ բնակարաններում աւելի դժուար է կռւել հիւանդութիւնների դէմ, մանաւանդ համաճարակ հիւանդութիւնների դէմ, ինչպէս են քոլերէշ (բկացաւ), խօլերա կամ տիֆ հիւանդութիւնները:

Բայց որովհետև չքաւորների համար, որքան էլ նրանք ուզենան, դժւար է բարեփոխել իրանց կեանքը, ուստի նրանց պէտք է օգնեն ունևորները: Աւելի պարտական են օգնելու լուսաւորւած, հասկացող մարդիկ, մանաւանդ բժիշկները:

«Բժիշկները չքաւորների բնական պաշտպաններն են»,— գրում էր Վիրխովը, երբ նա դեռ բոլորովին երիտասարդ էր.

բեռնակիր այծեր

և, իրաւի, նա իր ամբողջ կեանքում նրանց պաշտպանն է եղել: Նա շարունակ պնդում էր, թէ անհրաժեշտ է կրթութիւն տարածել լայն ծաւալով, թէ հասարակութիւնը պարտական է հոգալու ծերերի, անտէր երեխաների, հաշմանդամների մասին, թէ քանի որ մարդիկ ապրում են խոնաւ և վատ

Վ ի ր խ ո վ

բնակարաններում, դողում են ցրտից կամ շնչասպառ են լինում շոգից՝ վատ շինած գործարաններում, դժւար է որևէ բան անել հասարակական առողջապահութեան և հիւանդութիւնների դէմ նախազգուշական միջոցներ ձեռք առնելու համար:

Երբ քեռլենցիք Վիրխովին էրաւաոռւ ընտրեցին քաղա-

քայլին խորհրդարանի համար, Բերլինը կեղտոտ և գարշահոտ մի քաղաք էր և մահացումեան մեծ թիւ էր տալիս։ Նա սկսեց եռանդուն կերպով աշխատել իր հայրենի քաղաքի առողջապահական դրութիւնը բարւոքելու համար։ Հիմա Բերլինը եւրոպական օրինակելի մայրաքաղաքներից մէկն է, և դա գլխաւորապէս Վիրխովի շնորհիւ։

Նա ամենից առաջ ուշադրութիւն դարձրեց քաղաքի համար ստորերկրեայ կոյուղիներ շինել տալու վրայ։ Այն քաղաքներում, ուր ապրում են հարիւր հազարաւոր կամ միլիօնաւոր բնակիչներ, շատ կարևոր է, որ բոլոր կեղտոտութիւնները այնպէս հեռացնեն քաղաքից, որ չըվարակեն ո՛չ օդը և ո՛չ ջուրը։ Հէնց դրա մասին էլ սկսեց մտածել Վիրխովը։

Ի հարկէ դա հեշտ գործ չէր, բայց Վիրխովը՝ ճարտարապետների հետ միասին՝ կոյուղիները, այսինքն խողովակները ցանցի և ստորերկրեայ անցքերի մի այնպիսի նախագիծ կազմեցին և գլուխ բերին, որ հիմա բոլոր անմաքրութիւնները դուրս են տանում Բերլինից մի քանի վերստ հեռու, որ տարածւում են դաշտերում և պարարտացնում են բանջարանոցները։ Ճիշտ է, այդ գործը Բերլինի վրայ շատ թանկ է նստել, մօտ 60 միլիօն րուբլի, բայց դրա փոխարէն քաղաքը ազատւել է վատ գոլորշիացումներից։

Երբ հայրենի երկրում որևէ թշւառութիւն էր լինում, օրինակ, սով, համաճարակ հիւանդութիւն կամ պատերազմ, Վիրխովը իսկոյն աշխատում էր թեթևացնել վնասւածների դրութիւնը։ Պրուսիայի և Աւստրիայի մէջ ծագած պատերազմի ժամանակ նա վիրաւորներին օգնող մի ընկերութիւն հիմնեց և իր շարժական հիւանդանոցով հետևում էր զօրքին։

Իսկ երբ պայթեց ֆրանս-պրուսական պատերազմը, որ ինչպէս և ամեն մի պատերազմ, Վիրխովը աւելորդ ու անտեղի խստութիւն էր համարում, նրա վրայ սարսափելի ազդեցութիւն արաւ վիրաւորների դրութիւնը։ Նրանց տեղափոխւում էին ապրանքակիր շոգեկառքերում, որոնց մէջ թափթփած

էին ծղոտի վրայ. նրանց մօտ չըկային ոչ բժիշկները, ոչ ֆելդշերները: Վիրխովը շինել տւեց առանձին յարմարաւոր, ընդարձակ, տաք և լաւսով առատ շոգեկառքեր, հիւանդանոցի ձևով, ուր վիրաւորները պառկած էին լինում մահճակալների վրայ, և որ գլխաւորն է, դնացքների մէջ լինում էին բժիշկներ և հիւանդապահ կանայք: Վիրխովը ինքն անձամբ դնաց Ֆրանսիայի սահմանադլուխը և անձամբ ուղեկցեց վիրաւորների առաջին խմբին:

Դժւար է մի առ մի թւել այն բոլոր գեղեցիկ գործերը, որ կատարել է իր երկար կեանքի ընթացքում Վիրխովը: Սակայն մինչև հիմա էլ այդ ուրախունակեայ ծերունին, որ տասնևինններորդ դարի ամենահռչակաւոր գիտնականներից մէկն է և որի խօսքը պատգամի նման՝ լսում են ոչ թէ միայն իր հայրենակիցները, այլև բոլոր կրթւած մարդիկ, մինչև հիմա էլ մնում է աշխատաւոր, բարի և ուրիշի վշտի հ,ամար սրտացաւ:

Եւ Վիրխովի բոլոր մեծ գործերը գնահատւած են: Յոբելեանի ժամանակ պրոֆէսորներից մէկը ասաց նրան. «Ոչ թէ հաղորդակցութեան ճանապարհները, ոչ թէ գոլորշին ու ելէքտրականութիւնը, այլ ձեզ նման մարդիկ են փոխադարձ մօտեցնում ազգերը, յչշեցնում, որ բոլոր մարդիկ եղբայրներ են»:

Բոլոր համալսարանները, բոլոր գիտնական ընկերութիւնները շնորհաւորեցին պատկառելի ծերունուն: Միայն հեռագրների թիւը հազարի հասաւ:

Ռուսիայից քսան հազար բժիշկների կողմից ողջոյն ուղարկւեց Վիրխովին, որի մէջ ասւած էր թէ նա «ամբողջ աշխարհի բժիշկների զարդը և պարծանքն է»:

Բացի դրանից նրան նւիրեցին թանկագին պատկերներ, արձաններ, թանկագին քարերով զարդարւած բժշկական գործիքներ: Բայց ամենից լաւ պարգևները ետրլին քաղաքը տւեց իր հռչակաւոր բնակչին. մայրաքաղաքը նոր Հիւանդանոց է վառուցանում Վիրխովի անւան և նւիրում է 50 հազար րուբլի

դիտական ուսումնասիրութիւնների և ճանապարհորդութիւնների համար:

Այսպէս ուրեմն՝ այս անգամ մարդկութիւնը կարողացաւ երախտահատոյց լինել դէպի իր նշանաւոր աշխատակիցներից մէկը, որի մասին նրա հին բարեկամ Ֆիխտերը ասաց, թէ «վիրխովի գործունէութիւնը—օդ, ջուր, լոյս, առողջապահական բնակարան կրթութիւն եւ բախտաւորութիւն է»:

Ջ. Տ.-Գ.



ՀԻՇՈՂՈՒԹԻՒՆ

ԳՐԱԽԱՂԱՂ (Քանն)

Չորս տարերք

—

Ինչպէս յայտնի է՝ բնութիւնն ունի չորս տարերք. հող, ջուր, օդ, կրակ: Խաղ սկսողը թաշկինակը գցում է մէւսի վրայ և տարերքից մէկն ու մէկի անունը տալիս, բացի կրակից: Թաշկինակ բռնողը պէտք է տայ այդ տարերքի մէջ ապրող արարածի կամ նրանում գոյութիւն ունեցող առարկայի անուն. օրինակ՝ հող — խլուրդ, ջուր — շնաձուկ, օդ — արծիւ. և այլն: Ով որ կրկտայ այնպիսի արարածի կամ առարկայի անուն, որ չէ ապրում կամ գոյութիւն չունի համապատասխան տարերքի մէջ, կամ թէ մի անգամ ասածը երկրորդ անգամ էս կրկնէ, նա վճարում է ֆանտ:

Գրաւ թափելը կամ՝ ֆանտ վճարելը

1. Անգիր ասել մի որևէ ոտանաւոր:
2. Երգել երգ:
3. Պատմել մի անեկդոտ:
4. Պատմել մի որևէ զւարճալի դէպք իր կեանքից:
5. Լուծել «Աղբիւրի» հանելուկներից մէկը:
6. Ասել ամեն մէկին մի-մի գրաւիչ խօսք:
7. Ասել ամեն մէկին մի-մի յանդուգն խօսք:
8. Շեռաց մի ոտանաւոր գրել: Նիւթը երկու բառ. օրինակ՝ շուն և կատու, կատու և մուկ, վարդ և փուշ: Առհասարակ խիստ չըպիտի լինել բովանդակութեան, վանկերի և յանգերի վերաբերմամբ:
9. Տալ ամեն մէկին մի որևէ խորհուրդ:

10. Խնդրել ամեն մեկից մի-մի խորհուրդ։

11. Ասել թե ինչ ընծայ կըտայիք ամեն մեկին եթե վիզիթը ձեզ ընկնէր։

12. Խոստովանել իր ամենամեծ պակասութիւնը։

13. Ամեն մեկին համեմատել ծաղկի հետ, և բացատրել նմանութիւնը. օրինակ՝ դուք քնքոյշ էք շուշանի պէս, դուք բարձրահասակ էք չինարի պէս։

14. Ամեն մեկին նմանեցնել մի-մի կենդանու և բացատրել նմանութիւնը վերը յիշած օրինակների պէս։

15. Ասել «այդ ես էի», օրինակ՝ «երեկ մեկը մի հրաշալի երգ էր երգում» — «այդ ես էի»։ «Երեկ մեկը շան թրթռաճ դէմք ունէր» — «այդ... ես էի»։

16. Կանգնել ամեն մեկի առաջ հերթով, և առանց աչքը խփելու, առանց ծիծաղելու՝ շեշտակի նայել նրա (դեկավարի) աչքերում։

17. Առանց ձեռքերի օգնութեան նստել յատակի վրայ. այդպէս էլ վեր կենալ։ (Սա տղերանց համար է)։

18. Մի ոտքի վրայ կանգնած՝ կարդալ կամ մի որևէ բան արտասանել։

19. Ընկնել ջրհորի մէջ։ Սա կատարւում է այսպէս, պէտք է չոքել, կռանալ և ասել. — «Ես ընկայ ջրհորի մէջ». «Քանի՞ սաժէն է խորութիւնը» — «Երկու». «Ո՞վ պէտք է քեզ բարձրացնի». նա տալիս է մէկնումէկի անունը, որը և պէտք է մօտենայ և բարձրացնէ նրան։

20. Խոստովանանք։ Աչքերը կապում են և հարցնում. «Յաճա՞խ ես դու այդպէս անում», — ցոյց են տալիս, որ իբր թէ գողանում է. «Յաճախ» կամ «ոչ»։ «Միշտ այսպէ՞ս ես լինում». — ցոյց են տալիս, որ իբր թէ հարբած է. — նա էլ պատասխանում է «երբեմն» կամ «միշտ», կամ «ոչ մի անգամ» և այլն։ Երբ աչքերը բացում են, նրան պատմում են, թէ ինչ էլն հարցնում։

21. Ամեն մեկի համար մի-մի բան գուշակել։

22. Պատասխանել երեք հարցի, առանց այո և ոչ գոռծածելու։

23. Մի նորութիւն պատմել։

24. Ամեն մեկին բարևել այլ և այլ տեսակ. ծռւելով,

բէւերանա անելով, գլխարկը վերցնելով, օդալին Համբոյր ուղարկելով, ոտներն իրար զարկելով և այլն:

25. Ցան ամեն մի անկիւնում կատարել մի-մի բան. լալ, ծիծաղել, երգել, պարել, ածել մի որևէ գործիքի վրայ և այլն:

26. Ձայնը նմանեցնել մի որևէ կենդանու:

27. Գնալ միւս սենեակ. վերարկուն կամ մի ուրիշ բան ծածկել առջևից և դուրս գալ այնպէս, որ կարծեն թէ գլուխը շուռ է եկել:

Ամեն մի տանուլ տուող, կամ զեկավարողի ընտրութեամբ կամ առաջուց պատրաստած թուակիր թերթիկներով, կատարում է վերն առաջ բերած «Ֆանտ» վճարելու միջոցներից մէկն ու մէկը:

Գ. ԲԱՔՈՒՐԵԱՆ

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Ապրիլի № 10—11-ի մէջ Z-ի առաջարկած հանելուկների լուծումը.

—

1) Ծառեր.

2)



Վերցրինք 16 լուցկին, ստացանք 4 քառակուսի. յետոյ վերցրինք 4 ուղղահայեաց լուցկիները և դարսեցինք հորիզոնական կարգով, որ և ստացանք 2 մեծ քառակուսի:

Յ. Մարութեանց

Խմբագիր-Հրատարակիչ՝
ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

—

Հայը իմիմաբերաբար չի պաշտպանում իր ազգային հաստատութիւնները, իսկ երբ նրանք խափանւում, կործանւում են, այն ժամանակ միայն ողբում է իր անիոխարինելի կորուստը։

Աղբիւր-Տարազ այսօր պետք ունին իմիմանաչ հայի պաշտպանութեան։ Այդ պաշտպանութիւնը պիտի լինի Աղբիւր-Տարազը ազգի բոլոր խաւերում ընդարձակ տարածելով։

Մեր շուրջն են հայ ամենանշանաւոր գրական ոյժերը.

Պ.պ. Ադայեանց, Պաշտեանց, Նարպեյ, Շիրվանզադէ, Փախազեան, Զոլի, Թումանեանց, Զոլի. Զոլիանիխեան եւ այլն եւ այլն։ Մեր ազգի պարծանիքն էլ դրանք են եւ դրանք էլ աշխատակցում են մեզ։ Հայ բոլոր գրողբժիշկները մասնակցում են Տարազի-Աղողջապահական թերթում։ Մնում է, որ ընթերցող հայն էլ գիտակցաբար վերաբերի Աղբիւր եւ Տարազին, որոնց գոյութիւնը միմիայն իր, իր զաւակի եւ ընտանիքի համար է։

Մեզ յանդիմանում են, որ չենք դիմում ազգի աջակցութեան։ Նա այսօր դիմում ենք եւ խնդրում — տարածեցէք Ձեր շրջանում հայոց միակ մանկական Աղբիւր ամսագիրը, որ փոխարինում է հայ դպրոցին, տարածեցէք հայ միակ պատկերազարդ շաբաթաթերթ Տարազը եւ նրա յաւելած Աղողջապահական, Մոդաներ, Իլլիւստրասիօնը։ Տեւէ այնքան բաժանորդ, որ այդ թերթերի կենսական ծախսերը դուրս գան։ Հայ աւետաւոր մեր գրողները պատրաստ են եւ այսուհետեւ էլ շարունակել ձրի գրել, աշխատել։ Հայց ձրի ոչ թուղթ են տալիս, ոչ գրաշարները շարում, տպագրում եւ ոչ պօստը տանում։

Բացւած է 1902 թ. բաժանորդագրութիւնը

XX ԱՂԲԻՒՐ XX տ. և XIII տ. ՏԱՐԱԶ XIII

ամսագրի և հարանվանների

Հրատարակւում են նոյն ուղղութեամբ և աշխատակիցների մասնակցութեամբ

ԱՂԲԻՒՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Ա. ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ. Մանրավէպ, Զրոյց, Հէքիաթ, Ճանապարհորդութիւն, Կենսագրութիւն, բանաստեղծութիւն Գիտութիւն և արւեստ Նոր լուրեր. Այլ և այլք: Զւարճալիք: Մանկական, Ֆրեօբէլեան, շախմատի և այլ խաղեր, Րեբուսներ, Թւաբանական խնդիրներ. Անեկդոտ. Հանելուկ, Երգեր նոտաներով:

Բ. ԲԱԺԻՆ. Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ յօդւածներ և տեղեկութիւններ: Առաջարկութիւններ: Խորհուրդներ: Մատենախօսութիւն և նոր գրքեր: Խառն լուրեր: Պատասխաններ:

ՏԱՐԱԶԻ ԾՐԱԳԻՐԸ

Գեղարւեստ և գիտութիւն: Պատմական, ժամանակակից վէպեր, պատկերներ, թատրոնական գրւածներ: Բանաստեղծութիւն: Քննադատութիւն: Կենսագրութիւն: Կար, ձև, ձեռագործ և ամեն նորութիւն արհեստների վերաբերեալ: Տնային արդիւնագործութիւն, տնտեսութիւն: Ճանապարհորդութիւն և արկածք: Երաժշտութիւն և թատրոն: Լուրեր, տեղեկութիւններ: Յօդւածներ և այլն: Փելիէտօն, ծաղր, առած և կատակ: Զախմատի և այլ խաղեր, Րեբուս: Հարցեր, խորհուրդներ: Այլ և այլք: Ստւերանդակ: Յայտարարութիւններ:

12 №№ պատկերազարդ **ԱՂԲԻՒՐ** *ամսագիր*

12 №№ Պարիզի մոդաներ

12 №№ Ազդեցապահական

12 №№ Իլլիւստրասիօն

50 №№ Գրական - գիտական քրնւադատական

ՏԱՐԱԶ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՀԱՆԹԱԹԵՐԹ

ՊՐԷՄԻԱ, Ձիճաղ բարեկենդան.

Տարեկան բաժանորդագինը **10** ր., արտասահման **18** ր. կամ **50** ֆր. ապառիկ կամ մաս-մաս վճարող բաժանորդագրութիւն չէ ընդունւում: ԱՂԲԻՒՐ ամսագրի տարեկան գինը 3 ր. ՏԱՐԱԶԻՆԸ—6 ր. ՊՐԻՄԻԱ, ԻԼԼԻԻՍՏՐԱՍԻՕՆ, ՊԱՐԻԶԻ ՄՈԴԱՆԵՐ և ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ստանում են Աղբիւր և Տարազ միևնոյն հասցէով ստացող բաժանորդները:

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція иллюстр. жур. АГБЮРЪ-ТАРАЗЪ. TIFLIS (Caucase) Redaction des jour. AGBUR et TARAZ.

Խմբ.-Հրատ. ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ